ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում, Ե., “Անտարես” հրատ., 2016, 168 էջ:*

Արվեստագիտության թեկնածու Մարտին Հարությունյանի մենագրությունը ՀՀ-ում առաջին գիտական ուսումնասիրությունն է, որը քննում է Հայաստանի և արտերկրի մի շարք դիտադահլիճային շինությունները և առաջարկում հնարավոր նորագույն մեթոդների կիրառմամբ արդիականացնել Հայաստանի դիտադահլիճային շինությունների դահլիճներն ու դրանց բեմական մասերը: Աշխատության արդիականությունը ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ դիտադահլիճային շենքերի մեծամասնությունը խորհրդային ժամանակաշրջանից հետո երբևէ չի վերանորոգվել, մինչդեռ դրանք կարող են արդիականացվել և հարմարեցվել ժամանակակից դիզայնի պահանջներին:

Մ. Հարությունյանն անդրադարձել է Խորհրդային Հայաստանից ժառանգած այն շենքերին, որոնք ունեն դիտադահլիճային ենթամասեր (մշակույթի պալատներ, թատրոններ, գրադարաններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, տիպային դպրոցներ և այլ շինություններ): Հեղինակը փորձել է տեսական դիտարկումներից անցում կատարել գործնական կիրառություններին և լուծել Հայաստանի մշակութային և ուսումնադաստիարակչական մի շարք շենքերի անմխիթար վիճակին առնչվող խնդիրները: Ուսումնասիրությունն աչքի է ընկնում նյութի համակողմանի և խորը քննությամբ, գեղարվեստական, դեկորատիվ և կոմպոզիցիոն դիզայնի ոլորտի կիրառական հանգուցալուծումներով և արժեքավոր առաջարկներով:

Իր երկարամյա պրպտումների շնորհիվ Մ. Հարությունյանը երևան է բերել Հայաստանի դիտադահլիճային շինություններին վերաբերող՝ զանազան արխիվներում ու նախագծային ինստիտուտների ֆոնդերում պահվող բազմաթիվ աղբյուրներ, հավաքել փաստագրական-մատենագիտական տեղեկություններ, հետազոտել շենքերի արխիվային տվյալները և նախագծերը: Այն հանգամանքը, որ տվյալ նյութը երբևէ գիտական քննության առարկա չի եղել, աշխատության լույսընծայումը դարձնում է կրկնակի կարևոր: Հեղինակն արխիվային տվյալների հետ համադրել է նաև շինությունների կառուցման գործին մասնակցած մասնագետների ու վարչական կառույցների աշխատակիցների գրառումներ և տեղային տարբեր ուսումնասիրությունների եզրակացություններ:

Միջազգային դիտադահլիճային կառույցների բեմական մասերի նախագծման պատմական փորձի ու ժամանակակից դիզայներական լուծումների կարևորության տեսանկյունից գնահատելի է, որ Մ. Հարությունյանն օգտվել է նաև օտարալեզու գրականությունից, այդ թվում՝ արխիվային և ամսագրային նյութեր, համացանցային ռեսուրսներ, հայ և օտար հեղինակների աշխատություններ (85 անուն):

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, վերջաբանից, գունավոր վերատպություններով ու սև-սպիտակ աղյուսակներով հավելվածից, երկլեզու՝ ռուսերեն և անգլերեն ամփոփումներից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջինը՝ "Խորհրդային Հայաստանի ճարտարապետական ժառան-գության դիտադահլիճային մասեր ունեցող համակառույցները և դրանց փաստագրումը", ներառում է երեք մաս: "Պատմական ակնարկում" հեղինակը ծանոթացնում է շենքերի դիզայներական լուծումներին: Եվրո-պայի և Ռուսաստանի օրինակներով նա ներկա-յացնում է ակումբների, պալատների ստեղծման պատմությունը, անդրադառնում Խոր-հրդային Հայաստանում կառուցված ակումբներին, պիոներ պալատներին և վերջինների հետխորհրդային ճակատագրին: Նշելով հունա-հռոմեական թատերական առաջին շինությունների ճարտարապետական որոշ առանձնահատկություններ՝ Մ. Հարությունյանը գրում է. "Անտիկ թատրոնը լուծել է նաև մի կարևոր խնդիր, որը վերջին տասնամյակում ավելի ու ավելի է զբաղեցնում ճարտարապետների և բեմադրող ռեժիսորների միտքը՝ դա բեմի և դիտասրահի ամբողջականացումն է" (էջ 31): Անտիկ թատերական կառույցների հենքին անցում կատարելով խորհրդահայ թատերա-շինությանը՝ Ալ. Թամանյանի նախագծած Երևանի օպերային թատրոնի շենքի օրինակով երիտասարդ հետազոտողը բացահայտում է շինության դիտադահլիճային կառուցվածքի առանձնահատկությունները:

Երկրորդը՝ "Շենքերի ցուցակագրումը", անդրադարձ է Խորհրդային Հայաստանից ժառանգած դիտադահլիճային մասեր ունեցող շենքերին: ՀՀ-ում դիզայնի պատմության մեջ առաջին անգամ հեղինակը ցուցակագրել է Հայաստանի դիտադահլիճային շենքերը, դրանցից շատերը ենթարկել վավերագրական վերլուծության, քննել ու առաջարկել դիտա-դահլիճային կառույցների բեմական մասերի կոմպոզիցիոն արդիականացման հնարավոր և պատճառաբանված տարբերակներ: ՀՀ մշակույթի և քաղաքաշինության նախարարություններից ձեռք բերված՝ կառույցների ցանկերի մանրամասն ուսումնա-սիրության շնորհիվ Մ. Հարությունյանը ճշգրտել և հստակեցրել է դրանց վերաբերող բազմաթիվ տվյալներ:

Երրորդ՝ "Շենքերի փաստագրումը", մասում ակումբների, մշակութային տների, հայորդաց կենտրոնների օրինակով հեղինակն իրականացրել է շենքերի փաստագրում, կարևորել փաստագրական տվյալների մեկնաբանությունն ու վերլուծությունը, դրանց ներքին տարածքների ուսումնասիրությունը, դահլիճների ռեգեներացիան, հարմարե-ցումը և վերակառուցումը: Մանրամասն հետազոտության շնորհիվ Մ. Հարութ-յունյանը մատնանշել է դիտադահլիճային շինությունների դահլիճային մասերի բեմական հատվածների թերություններն ու արդիականացման ենթակա մասերը:

Այսպիսով, դասակարգելով դիտադահլիճային կառույցները, հեղինակը քննում է դրանց դահլիճային մասերն ու բեմական հատվածները և բնութագրում ներկայիս շեն-քային և դահլիճային վիճակը՝ տալով դիտադահլիճային կառույցների և բեմական մասերի մասնագիտական ու դիզայներական դիպուկ բնութագիրը: Մ. Հարությունյանը փաստում է, որ ներկայացված մշակութային կառույցների դահլիճներն ու բեմական հատվածներն ունեն դիզայներական լուրջ փոփոխությունների կարիք (էջ 80):

Հետազոտության երկրորդ՝ "Դիտադահլիճային շենքերի դահլիճների փոխակեր-պումը, բեմական մասերի տեխնոլոգիաները և դրանց դիզայնը միջազգային զուգա-հեռներում" գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: "Դիտադահլիճային կառույցների բեմական մասերի կոմպոզիցիոն ձևավորման և դիզայնի հիմունքները" ենթագլխում հեղինակն անդրադառնում է դիզայներական հորինվածքի հիմնական առանձնահատկու-թյուններին, որոնք առնչվում են իր ուսումնասիրության առարկային և եզրակացնում է. "Դիտադահլիճային կառույցների դիզայներական հորինվածքի տեսակները գոյանում են

ճարտարապետության պատմական զարգացման, շինարարական արվեստի, գեղարվեստի և հասարակության շարունակական առաջընթացի շնորհիվ…” (էջ 84):

Տեխնոլոգիական նոր լուծումներ փնտրելու մեխանիզմը, այլ կերպ ասած՝ նախադիզայներական վերլուծությունը, ինվերսիայի մեթոդի կիրառումը և էվրիտիկական համանմանության մեթոդը կարևորվել են “Դիտադահլիճային շենքերի բեմական մասերի դիզայն-նախագծման մեթոդաբանությունը” ենթագլխում, որտեղ միևնույն ժամանակ ընդգծվել է դիզայներական կոմպոզիցիոն լուծումների և “գունատեսության դերը”:

Վերջին՝ “Համաշխարհային ճանաչում ունեցող դիտադահլիճային շենքերի բեմական դեկորատիվ մասերի նմուշ-օրինակներ”, ենթագլխում Լիոնի ազգային օպերայի, Դրեզդենի օպերային թատրոնի, Ժնևի Մեծ թատրոնի, Տորոնտոյի Թոմաս Լ. Ուելս դպրոցի, Լոնդոնի Կանադա Ուաթըր գրադարանի օրինակներով հեղինակը ներկայացրել է XX դ. թատերական շինությունների դիտադահլիճների դիզայներական նոր միտումները՝ հանգամանորեն ուսումնասիրելով համաշխարհային դիզայներական նորագույն հայեցակարգերը, կիրառման հնարավորություններն ու օրինակները:

Երրորդ՝ “Խորհրդային Միությունից ժառանգած դիտադահլիճային շենքերը, դրանց բեմական մասերի վերակառուցումը և գեղարվեստական դիզայնը” գլխում հեղինակը մեկ անգամ ևս վերադառնում է առաջին և երկրորդ գլուխներում ուսումնասիրված հայկական շինություններին (Կանազի մշակույթի տուն, Էջմիածնի մշակույթի տուն, Արաբկիրի հայորդաց երիտասարդական կենտրոն, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, Հայաստանի ամերիկյան համալսարան և այլն), և յուրաքանչյուր կառույցի հնարավոր արդիականացումը պատկերազարդ աղյուսակի տեսքով ներկայացրել աշխատության համապատասխան հավելվածում՝ նշելով նաև, թե միջազգային հանդիսատեսային մասի որ դիզայներական նմուշներից են քաղված հնարավոր փոփոխությունների օրինակները:

Մարտին Հարությունյանի աշխատությունը լույս է տեսել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Պատասխանատու խմբագիրն է ճարտարապետության դոկտոր, պրոֆ. Դավիթ Քերթմենջյանը:

Դիզայներներին, ճարտարապետներին, բեմարվեստի մասնագետներին հասցեագրված այս արժեքավոր գիրքը դիզայնի ուրույն ոլորտի համակողմանի, լիարժեք ուսումնասիրություն է: Մ. Հարությունյանի անդրանիկ աշխատությունը կարևոր ներդրում է Հայաստանի դիզայնի պատմության և հետազոտության բնագավառում:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.
Արվեստագիտության թեկնածու